ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻՆ, ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻՆ ԵՎ ԱՅԼ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՅՔՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակի 09 բաժնի 05 խմբի 01 դասի «09. Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում» ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) ձեռք բերվող մարզագույքի (այսուհետ՝ մարզագույք) ցուցակը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) մարզագույքի բաշխման ցուցակը՝ ըստ մանկապատանեկան մարզադպրոցների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ մարզական հասարակական կազմակերպությունների՝ համաձայն N 2 հավելվածի։

2. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին՝ ծրագրի իրականացման նպատակով «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել ծրագրով նախատեսված միջոցների նվիրաբերության պայմանագիր՝ նախատեսելով, որ ծրագրով հատկացված միջոցները «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից պետք է օգտագործվեն միայն սույն որոշման N 1 հավելվածում նշված մարզագույքի ձեռքբերման նպատակով և բաշխվեն սույն որոշման N2 հավելվածում նշված կազմակերպություններին։

3. Սահմանել, որ՝ մարզագույքը սույն որոշման N 2 հավելվածում նշված կազմակերպություններին հատկացվում է անհատույց, սեփականության իրավունքով։

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐԻՆ, ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻՆ ԵՎ ԱՅԼ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՅՔՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներից և նպատակ է հետապնդում կարգավորելու մարզակառույցներին, մարզադպրոցներին և մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովելու գործընթացն ու գույքի բաշխումը։

Սույն որոշման նախագծի N2 հավելվածի համաձայն 50 և ավելի կմ հեռավորությամբ գտնվող մարզական կազմակերպություններին գույքով ապահովելու գործընթացի ժամանակ անհրաժեշտություն կառաջանա մարզերում խոշոր չափերի գույքի տեղափոխման համար տրանսպորտային միջոցների վարձակալություն հետևյալ ուղղություններով.

Գյումրի, Քաջարան, Հրազդան, Սամաղար, Վանաձոր, Աբովյան, Տափերական, Արտիմետ և այլուր (1308.92 կմ X 250 դրամ = 327230 դրամ)։

2. Արդշինինվեստբանկի «Երևան» մասնաճյուղի կողմից արտասահմանյան երկրներ 68648 ԱՄՆ դոլար և 735260 ռուսական ռուբլի փոխանցում կատարելու համար գանձվում է սակագին գործարքի կատարման համար, որը կազմում է 119700 դրամ և երաշխավորվող գումար՝ միջնորդ բանկի համար յուրաքանչյուր գործարքից 10000 դրամի չափով, ընդամենը՝ 30000 դրամ։ Ընդամենը բանկային ծառայության գծով ծախսը կազմում է 149700 դրամ։

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի
նախարար Արթուր ՊԵՏՐՈՍՅԱՆ